ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Քիմիայի և կենսաբանության

ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Ղազարյան Արմինե Հրաչիկի /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № 16

« 08 » Մայիս 2023թ.

ՔԿ/բ-147 ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Դասիչ, դասընթացի անվանում

## ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ 031301.00.6 Հոգեբանություն

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 031301.01.6 Հոգեբանություն

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Հոգեբանության բակալավր

/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ Քիմիայի և կենսաբանության

/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ հեռակա

/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ հեռակա 1-ին կուրս, 2-րդ կիսամյակ


Դասախոս(ներ)՝ Շուշան Քառյան

/անուն, ազգանուն/

էլ. հասցե/ներ shoushankaryan@gmail.com


Վանաձոր- 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում ........ 3
2. Դասընթացի նպատակը և խնդիրները........ 3
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները ........ 3
4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը........ 3
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների. ........ 5
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը ........ 5
7. Ուսումնական աշխատանքների տեսակները ........ 6
8. Դասավանդման մեթոդներներ........ 7
9. Ուսումնառության մեթոդներ ........ 7
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը........ 8
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ........ 9
12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ........ 9
12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ ........ 12
12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ ........ 13
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում ........ 18
14. Գնահատում ........ 19
14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներ ........ 19
14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում........ 19
14.3. Հարցաշար ........ 20
14.4. Գնահատման չափանիշներ........ Ошибка! Закладка не определена.
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ........ 22

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

**1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում․**

"Հոգեֆիզիոլոգիա" առարկան նախատեսված է դասավանդել մասնագիտությամբ ապագա հոգեբաններին, որը ՙՄարդու ֆիզիոլոգիա՚ առարկայի առանձին ճյուղերից է և կարևոր բազա է հանդիսանում հոգեբանական նուրբ գործընթացը ըմբռնելու համար: հոգեֆիզիոլոգիայի կապը սերտ է ԲՆԳ-ի ԿՆՀ-ի մորֆելոգիայի և ֆիզիոլոգիայի, ինչպես նաև հոգեբանության հետ:

**2. Դասընթացի նպատակը և խնդիրները.**

**2.1.** Դասընթացի նպատակն.

Պատկերացում կազմել և ուսումնասիրել անհատի հոգեկան գործընթացների և վիճակների նյարդային մեխանիզմները, հոգեկան երևույթների ուղեղային գործընթացները:

**2.2.** Դասընթացի խնդիրներն են․

- Ուսումնասիրել արդի հոգեֆիզիոլոգիայի հայեցակարգերը, հոգեկան գործընթացների ձևավորման և զարգացման նեյրոֆիզիոլոգիական հիմքերը:
- Յուրացնել գլխուղեղի կառուցվածքը և գործառույթը՝ որպես հոգեկան գործընթացների կաչնոր օրգան
- Պատկերացում կազմել գլխուղեղի ուսումնասիրման մեթոդներին և սկզբունքներին,
- Ծանոթանալ մարդու գիտակցված կամային վարքն ապահովող հիմնական գործառույթային
- ուղեղային համակարգերին,
- Պատկերացնել ընկալման, ուշադրության, հիշողության հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները:
- Ուսումնասիրել միջկիսագնդային անհամաչափությանը, կիսագնդերի դոմինանտության ակտիվ գործունեության ժամանակ նրանց փոխազդեցության առանձնահատկությունները:

**3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/**

Հոգեֆիզիոլոգիա դասընթացը համարվում է կրթական ծրագրի բաղադրիչներից մեկը, որի ուսումնասիրությունը ուսանողներից պահանջում է գիտելիքներ օրգանիզմի անատոմիական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունների վերաբերյալ:
Դասընթացին նախորդում է ԿՆՀ-ի մորֆոլոգիա, ԲՆԳ-ի ֆիզիոլոգիա դասընթացը

**4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[1] և կոմպետենցիաները․**

**4.1.** *Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է գիտենա.*

- Հոգեֆիզիոլոգիական հիմնական հասկացությունների գիտական հիմքերը
- Հոգեֆիզիոլոգիական օրինաչափությունների ուսումնասիրման ընդհանուր սկզբունքները,
- հոգեկան գործընթացների ֆիզիոլոգիական առանձնահատկությունները և գլխուղեղի կառուցվածքն ու գործառույթը՝ որպես նյութական սուբստրատ

[1] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf

*4.2.Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա.*

- պատկերացնել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերը,
- կատարել հիմնավորված եզրահանգումներ հոգեկան երևույթների,օրինաչափությունների և նրանց գործառույթների համար պատասխանատու գլխուղեղային կառույցների վերաբերյալ,
- պատկերացնի հոգեֆիզիոլոգիայում օգտագործվող հետազոտման մեթոդների վերաբերյալ,

*4.3 Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է տիրապետի.*

- հիմնական հոգեֆիզիոլոգիական գործընթացների ձևավորման և զարգացման նեյրոֆիզիոլոգիական հիմքերին,
- հոգեֆիզիոլոգիայում ընդունված հիմնական հայեցակարգերին,
- ունակ լինի հստակ ներկայացնելու հոգեֆիզիոլոգիական օրինաչափություններ հիմնական դրույթները,
- հոգեֆիզիոլոգիայի գիտական հիմնավորումները, հիմնախնդիրները և լուծման հնարավոր ճանապարհները

**Դասընթացի ընթացքում կիրականանա նաև ծրագրի ավարտական պահանջներով նախատեսված հետևյալ կոմպետենցիաների զարգացումը՝**

***Առարկայի ուսուցման գործընթացը ուղղված է հետևյալ ընդհանրական գործիքային կոմպետենցիաների (այսուհետ ԳԿ) ձևավորմանը***

ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,
ԳԿ4 մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
ԳԿ7 տարրական համակարգչային գիտելիքներ;
ԳԿ8 տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն),
ԳԿ9 խնդիրների լուծում,
ԳԿ10 որոշումների ընդունում:

**Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝**

ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
ՀԳԿ2 հետազոտություններ կատարելու ունակություններ,
ՀԳԿ3 սովորելու ունակություն,
ՀԳԿ8 ինքնուրույն աշխատելու ունակություն,

***Առարկայի ուսուցման գործընթացը ուղղված է հետևյալ ընդհանրական միջանձնային կոմպետենցիաների (այսուհետ ՄՁԿ) ձևավորմանը***

ՄՁԿ1 քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն,
ՄՁԿ2 թիմային աշխատանք,
ՄՁԿ3 միջանձնային ունակություններ,
ՄՁԿ4 միջառարկայական թիմում աշխատելու ունակություն:

***Առարկայի ուսուցման գործընթացը ուղղված է հետևյալ առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաների (այսուհետ ԱԿ) ձևավորմանը***

ԱԿ2 հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
ԱԿ3 համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը,
ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
ԱԿ5 հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների զարգացման մեթոդները,
ԱԿ6 կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,

**Ուսուցչական կոմպետենցիաների մասով բակալավրը պետք է տիրապետի հետևյալ կոմպետենցիաներին.**
Ու2 ուսուցման ժամանակակից մեթոդները և տեխնոլոգիաները ուսումնասիրելու, ներդնելու կարողություն,
Ու3 խորհրդատվական կարողություն ,
Ու4 առարկայական գիտելիքներին տիրապետելու կարողություն ,
Ու5 ուսուցման բարենպաստ միջավայր ստեղծելու կարողություն,
Ու6 ժամանակը արդյունավետ օգտագործելու հմտություն,
Ու7 սեփական գործունեության արդյունքները գնահատելու և վերլուծելու կարողություն,
Ու8 մասնագիտական կատարելագործման անհրաժեշտության գիտակցում,
Ու9 համագործակցության միջոցով միջառարկայական խնդիրներ լուծելու կարողություն :

5. **Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների.**

**«Հոգեֆիզիոլոգիա»** դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտություններն ուսանողները կարող են հետագայում կիրառել հետագա աշխատանքային գործունեության ընթացքում:

6. **Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը**

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարություն (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | | **4 կրեդիտ/120 ժամ** |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ | ժամաքանակ |
|---|---|---|
| Դասախոսություն | | 8 |
| Գործնական աշխատանք | | 4 |
| Սեմինար պարապմունք | | - |
| Լաբորատոր աշխատանք | | 4 |
| Ինքնուրույն աշխատանք | | 104 |
| **Ընդամենը** | | 120 |
| Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն) | | Քննություն |

7. **Ուսումնական աշխատանքների տեսակները**.

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսւոթյուն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդոլոգիան:

  Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն
- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[2]՝
  - <u>**Ռեֆերատ**</u> – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում

[2] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):

- **Գործարար խաղեր** – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
- **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
- **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
- **Կոնկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
- **Նախագծերի մեթոդ** – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
- **Հարցի նախապատրաստման մոդել** –կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
- **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- **Աշխատանքային տետր** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- **Զեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
- **Հարցազրույց** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար,* սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր․․․․

9. **Ուսումնառության մեթոդներն են՝** մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում․․․․

## 10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը` ըստ բաժինների և թեմաների.

| հ/հ | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար պարապմունք | գործնական աշխատանք | լաբորատոր աշխատանք | ինքնուրույն աշխատանք |
| 1. | Ներածություն<br>Հոգեֆիզիոլոգիա առարկան , նպատակը  և խնդիրները: Հոգեֆիզիոլոգիական հետազոտման նշանակությունը նյարդային և հոգեկան հիվանդությունների ախտորոշման և բուժման հարցերում: | 1 | | | | 15 |
| 2. | Հոգեֆիզիոլոգիական ուսումնասիրությունների  մեթոդները;ԷԷԳ,ՄՌՏ, ուղեղաքարտեզագրման մեթոդ  և այլն: Ֆունկցիոնալ վիճակներ: | 1 | | 2 | | 12 |
| 3. | Նյարդային համակարգի կառուցվածք :Նեյրոն: Նրա կառուցվածքն ու գործառույթները: Սինապսներ : Էլեկտրական դրդողականություն :Ռեֆլեքսային աղեղ: | | | | 2 | 12 |
| 4. | Վարքի և հուզական վիճակների հոգեֆիզիոլոգիական հիմունքները:<br>Միջնորդանյութեր, նրանց դերը վարքային ռեակցիաներում | 2 | | | | 22 |
| 5. | Գործառական բլոկներ: Զգայական և շարժողական գործընթացների հոգեֆիզիոլոգիա: | 1 | | | 2 | 12 |
| 6. | Գիտակցության և մտածողության հոգեֆիզիոլոգիա: Հիշողության և ուշադրության հոգեֆիզիոլոգիա:Հիշողության ձևեր | 1 | | 2 | | 16 |
| 7. | Հույզերի և սթրեսի հոգեֆիզիոլոգիա: Քնի հոգեֆիզիոլոգիա | 2 | | | | 15 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 8 | | 4 | 4 | 104 |

## 11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|

| Պարտադիր գրականություն (ՊԳ) | | |
|---|---|---|
| 1. | Գրիգորյան Վ.Հ. Հոգեֆիզիոլոգիա Դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2-րդ վերամշակված հրատարակություն, 464 էջ | 2014 |
| 2. | Կատունովա Վ.Վ., Պոլովինկինա Է.Օ.,Նեյրոֆիզիոլոգիա. բուհական դասագիրք. - Նիժնի Նովգորոդ: NIMB, | 2013 թ. |
| 3. | Александров М. В., Лытаев С.А., Березанцев М.С., Психофизиология, учебное пособие,3-е перепаботанное и дополненное издание,СПБ, спец.лит. | 2018 |
| 4. | Психофизиология, учебник для вуз-ов, под ред. Александрова Ю.И.,издательский дом Питер. | 2021 |
| | | |
| Լրացուցիչ գրականություն(ԼԳ) | | |
| 1. | Աղաբայան Հ.Ռ., Առաքելյան Ա. Ն., Հոգեֆիզիոլոգիայի հիմունքներ, ուսումնական ձեռնարկ, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն | 2016 |
| 2. | Блум Ф., Лейзерсон А., Хофстедтер Л. Мозг, разум и поведение. М. Наук | 1988 |
| 3. | Данилова Н.Н. Психофизиология, Учебник для ВУЗ-ов , Аспект Пресс, Москва | 2012 |
| 4. | Шостак В.И.Психофизиология Издательство:ЭЛБИ-СПБ Россия | 2009 |
| 5. | Лурия А.Р. Основы нейропсихологии, Нейропсихология сегодня/ под ред Е.Д. Хомской , Москва МГУ. | 1995 |
| | | |
| Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ) | | |
| 1. | https://academia-moscow.ru pdf Ляксо Е.Е.,Ноздрачев А.Д. Психофизиология | 2012 |
| 2. | https:// img3labirint.ru/ <<Совершенный мозг>> -Дипак Чорпак, Рудольф Танзи | 2012 |

## 12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

### 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| հ /հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Գրականություն[3] |
|---|---|---|---|---|
| 1. | Ներածություն<br>Հոգեֆիզիոլոգիա առարկան , նպատակը | | 1 | |

[3] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր․՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | |
|---|---|---|---|---|
| | և խնդիրները: Հոգեֆիզիոլոգիական հետազոտման նշանակությունը նյարդային և հոգեկան հիվանդությունների ախտորոշման և բուժման հարցերում: | Հոգեֆիզիոլոգիան որպես գիտություն<br>Պատմական համառոտ ակնարկ | | Պ /Գ 1-4, Լ/Գ 1-5<br>Լ/Գ 1-5 |
| **2.** | Վարքի և հուզական վիճակների հոգեֆիզիոլոգիական հիմունքները: Միջնորդանյութեր, նրանց դերը վարքային ռեակցիաներում | Գլխուղեղի կառուցվածքի հիմնական սկզբունքները: Ֆունկցիոնալ վիճակն ապահովող և կարգավորող նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմները:<br><br>Գլխուղեղային միջնորդանյութեր, դասակարգումը ազդեցության բնույթը, նրանց մասնակցությանը վարքային ռեակցիաներին և հոգեկան գործընթացներին: | 2 | Պ-Գ 1-4<br>Լ/Գ 1-5 |
| **3.** | Գործառական բլոկներ: Զգայական և շարժողական գործընթացների հոգեֆիզիոլոգիա: | Առաջին գործառական բլոկի առանձնահատկությունները<br>• Երկրորդ գործառական բլոկի առանձնահատկությունները<br>• Երրորդ գործառական բլոկի առանձնահատկությունները<br>• Գործառական բլոկների խանգարումները | 1 | Պ /Գ 1-4, Լ/Գ 1-5 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **4.** | Գիտակցության և մտածողության հոգեֆիզիոլոգիա: Հիշողության և ուշադրության հոգեֆիզիոլոգիա: Հիշողության ձևեր | ▪ Գիտակցության բաղադրամասերը,<br>▪ գիտակցության ձևավորման հիմնական հայեցակարգերը, "լուսավոր բիծ":<br>▪ Կեղևի ճակատային բլթերը և գիտակցությունը:<br>▪ Գիտակցական-ենթագիտակցական, կեղև-ենթակեղև<br>▪ փոխհարաբերությունները, կենսաէլեկտրական ակտիվության<br>▪ առանձնահատկությունները:<br>▪ Մտածողական գործունեության նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմների հիմնական սկզբունքները:<br>▪ Խոսք, խոսքի հանգարումները: | 1 | Պ /Գ 1-4, Լ/Գ 1-5 |
| **5.** | Հույզերի և սթրեսի հոգեֆիզիոլոգիա: Քնի հոգեֆիզիոլոգիա | ▪ Հույզերի դասակարգումը, հույզերի հարմարողական նշանակությունը:<br>▪ Հույզերի նեյրոֆիզիոլոգիական<br>▪ մեխանիզմները:<br>▪ Քնի փուլերը:<br>▪ Քնի և արթնության նեյրոֆիզիոլոգիան և նեյրոքիմիան:<br>▪ Երազ, երազատեսություն:<br>▪ Օրային ռիթմեր: Քնի խանգարումները:<br>▪ Սթրեսի, սթրեսային հակազդման, սթրեսային գործոնների սահմանումը:<br>• Սթրեսը և հույզերը:<br>Սթրեսի հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները և նյարդակազմա-բանությունը: | 2 | Պ /Գ 1-4, Լ/Գ 1-5 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Սթրեսային խանգարումների ձևավորման տեսությունները | | |
| | | | | |

## 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձևը | Գրականություն[4] |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հոգեֆիզիոլոգիական ուսումնասիրությունների մեթոդները;ԷԷԳ,ՄՌՏ, ուղեղաքարտեզագրման մեթոդ և այլն: Ֆունկցիոնալ վիճակներ: | Ծանոթանալ Հոգեֆիզիոլոգիայում կիրառվող մեթոդների և սարքավորումներին | 2 | բանավոր հարցումներ, գրավոր թեստերի առաջադրում | Պ /Գ 1-4, Լ/Գ 1-5 Լ/Գ 1-4 |
| 2. | Գիտակցության և մտածողության հոգեֆիզիոլոգիա: Հիշողության և ուշադրության հոգեֆիզիոլոգիա:Հիշողության տեսակները | Հասկացություն գիտակցության մասին;<br>Գիտակցության ի՞նչպեսի խանգարումներ գոյություն ունեն;<br>Հիշողության տեսակներ, հիշողության տեսակների ուսումնասիրություն | 2 | բանավոր հարցումներ, գրավոր թեստերի առաջադրում | Պ /Գ 1-4, Լ/Գ 1-5 Լ/Գ 1-4 |

## 12.3 Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

[4] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր. ՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| /հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձևը | Գրականություն[5] |
|---|---|---|---|---|---|
| 1. | Նյարդային համակարգի կառուցվածք Նեյրոն: Նրա կառուցվածքն ու գործառույթները: Սինապսներ : Էլեկտրական դրդողականություն :Ռեֆլեքսային աղեղ: | նեյրոնների կառուցվածքային առանձնահատկություններն ու գործառույթները; Սինապսների տեսակներ ռեֆլեքս, ռեֆլեկտոր աղողի կառուցվածք | 2 | բանավոր հարցումներ, գրավոր թեստերի առաջադրում | Պ-Գ 1-4<br>Լ/Գ 1-5 |
| 2. | Գործառական բլոկներ: Զգայական և շարժողական գործընթացների հոգեֆիզիոլոգիա: | Գործառական բլոկների ուսումնասիրումը: Բլոկների աշխատանքի խանգարումները: | 2 | բանավոր հարցումներ, գրավոր թեստերի առաջադրում | Պ-Գ 1-4<br>Լ/Գ 1-5 |

**12.4 Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ**

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Ուսումնասիրվող հարցեր | Աշխատանքի տեսակը[6] | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն[7] |
|---|---|---|---|---|---|---|

[5] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր. ՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն
[6] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը
[7] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր. ՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱ | Հիշողության տեսակները Հիշողության գործառական կառուցվածքը Հիշողության ժամանակային կազմակերպման հայեցակարգ Հիշողության վիճակների հայեցակարգ կամ ակտիվ հիշողության տեսություն | Զեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ, ռեֆերատ կամ զեկույց՝տեսաասաալիկների միջոցով | դասընթացի ավարտից հետո | Չափանիշները ներկայացվում են ստորև | Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից |
| 2. | ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱ | Ուսուցման տիպերը Ուսուցման նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմների մասին պատկերացումները . Ուսուցման նյարդակազմաբանությունը Ուսուցման խանգարումները | Զեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ, ռեֆերատ կամ զեկույց՝տեսաասաալիկների միջոցով | դասընթացի ավարտից հետո | Չափանիշները ներկայացվում են ստորև | Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. | ՀՈՒՅԶԵՐԻ ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱ | Հույզերի հոգեֆիզիոլոգիական և հոգեմանական պատկերացումները Հույզերի գործառույթները . Անհատական տառոմերություններ ը և հույզերը . Հույզերի նյարդակազմաբանություն Հույզերի կենտրոնական մեխանիզմների կենսաքիմիական առանձնահատկությունները | Զեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ, ռեֆերատ կամ զեկույց՝տեսասահիկների միջոցով | դասընթացի ավարտից հետո | Չափանիշները ներկայացվում են ստորև | Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից |
| 4. | ՍԹՐԵՍԻ ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱ | . Սթրեսի, սթրեսային հակազդման, սթրեսային գործոնների սահմանումը Սթրեսային գործոններ և սթրեսառեակտիվություն Սթրեսը և հույզերը | Զեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ, ռեֆերատ կամ զեկույց՝տեսասահիկների միջոցով | դասընթացի ավարտից հետո | Չափանիշները ներկայացվում են ստորև | Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱ | Գիտակցության նյարդաֆիզիոլոգիական տեսությունները Գիտակցության ուղեղային ապահովումը. Գիտակցությունը և արթնության մակարդակները Ուղեղային կենտրոնները և գիտակցությունը Գիտակցությունը և միջկիսագնդային անհամաչափությունը | Զեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ, ռեֆերատ կամ զեկույց՝ տեսասալիկների միջոցով | դասընթացի ավարտից հետո | Չափանիշները ներկայացվում են ստորև | Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից |
| 6. | ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ և ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | Չգիտակցվող ընկալում Թմրադեղերի ազդեցությունը գիտակցության վրա Գիտակցության խանգարումներ | Զեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ, ռեֆերատ կամ զեկույց՝ տեսասալիկների միջոցով | դասընթացի ավարտից հետո | Չափանիշները ներկայացվում են ստորև | Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից |
| 7. | ՔՆԻ ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱ | Քնի փուլերը Քնի և արթնության նեյրոֆիզիոլոգիան և նեյրոքիմիան Երազ, երազատեսություն Օրային ռիթմեր Քնի խանգարումները | Զեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ, ռեֆերատ կամ զեկույց՝ տեսասալիկների միջոցով | դասընթացի ավարտից հետո | Չափանիշները ներկայացվում են ստորև | Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8. | ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱ | Մտածողության ձ¨երը<br>Մտածողության հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները<br>Մտածողության նեյրոնային համահարաբերականները<br>Մտածողության նյարդաֆիզիոլոգիական համահարամբերականները | Զեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ, ռեֆերատ կամ զեկույց՝տեսասալիկների միջոցով | դասընթացի ավարտից հետո | Չափանիշները ներկայացվում են ստորև | Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից |
| 9. | ԻՆՏԵԼԵԿՏԻ ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ | Մտածողության նյարդակազմաբանություն<br>Խոսք մտածողություն<br>Մտածողության խանգարումներ | Զեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ, ռեֆերատ կամ զեկույց՝տեսասալիկների միջոցով | դասընթացի ավարտից հետո | Չափանիշները ներկայացվում են ստորև | Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից |
| 10 | ՄԻՋԿԻՍԱԳՆԴԱՅԻՆ ԱՆԶՈՒԳԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱ | Միջկիսազգնդային անզուգաչափությունը խոսքը<br>Միջկիսազնդային տարբերությունների նյարդակազմաբանությունը. | Զեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ, ռեֆերատ կամ զեկույց՝տեսասալիկների միջոցով | դասընթացի ավարտից հետո | Չափանիշները ներկայացվում են ստորև | Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից |

13 Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | Լսարան կահավորված համակարգչով, պրոյեկտորով և էկրանով |
| Համակարգչային ծրագրեր | Microsoft Offis Power Point |
| Այլ | |

**14 Գնահատում**

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[8]:

**14.3 Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝**

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝առավելագույնը 20 միավոր,
- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր։

**14.4 Ուսանողների գիտելիքների ստուգում.**

Դասընթացն ամփոփվում է քննությամբ/ստուգարքով/:

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի 2 քննության միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

(Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով):[9]

---

[8]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

[9] Կիրառվում է կամ առաջին, կամ երկրորդ պարբերությունն ըստ դասընթացի ամփոփման ձևի:

### 14.5 Հարցաշար (ըստ ծրագրի)

1. Հոգեֆիզիլոգիան , որպես գիտություն , նրա նպատակը և խնդիրները;
2. ԿՆՀ-ի կառուցվածքագործառական առանձնահատկությունները:
3. Հոգեֆիզիոլոգիայում օգտագործվող ուսումնասիրման մեթոդները:
4. Կեղևային ակտիվության ցուցանիշները: Ուղեղի գումարային էլեկտրական ակտիվության գրանցումը(ԷՈՒԳ):
5. Գլուղեղի գործառական բլոկների ընդհանուր բնութագիրը:
6. Առաջին գործառական բլոկ:
7. Երկրորդ գործառական բլոկ:
8. Երրորդ գործառական բլոկ;
9. Գործառական բլոկների խանգարումները:
10. Գլխուղեղային միջնորդանյութեր, նրանց դերը վարքային ռեակցիաներում:
11. Դրդող և արգելակող միջնորդանյութեր;
12. Մեծ կիսագնդերի կեղևի բջջակերտվածքային քարտեզ:
13. Ճեղքված ուղեղի հետազոտությունները: Անհամաչափության զարգացումը:
14. Շարժողական համակարգի հոգեֆիզիոլոգիա:
15. Շարժողական ակտ: Շարժումների կազմակերպման հոգեֆիզիոլոգիական հայեցակարգերը:
16. Շարժման նյարդակազմաբանությունը:Շարժողական ակտը նախաձեռնելու հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները:
17. Շարժողական խանգարումներ:
18. Զգայական համակարգերի հոգեֆիզիոլոգիա:
19. Զգայական ազդակների ընկալումը, փոխանցումը և վերափոխումը:Զգայական ազդակների
նյարդակազմաբանությունը և նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմները:
20. Զգայական համակարգերի (տեսողական, լսողական,հավասարակշռության, համային,
հոտառական) կազմավորման սկզբունքները:
21. Զգայական համակարգերի խանգարումներ:
22. Ֆունկցիոնալ համակարգեր
Գիտակցության նյարդաֆիզիոլոգիական տեսությունները:
23.Գիտակցության ուղեղային ապահովումը:
24. Ուղեղային կենտրոնները և գիտակցությունները: Չգիտակցված ընկալում :
26. Գիտակցության վրա ազդող նյութեր և գործոններ :
27. Մտածողության նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմները:
28. Խոսք և մտածողություն:Խոսքի ուղեղային ապահովումը, խանգարումները:
29. Ինտելեկտի հոգեֆիզիոլոգիական բնութագիրը:
30. Մտածողության խանգարումներ:
31. Ուշադրության ընդհանուր բնութագիրը :
32. Ուշադրության նյարդակազմաբանությունը :
33. Ուշադրության խանգարումները :
34. Հիշողության նյարդակազմաբանությունը: Հիշողության խանգարումները
35. Ուսուցման նյարդակազմաբանությունը, նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմները:
36. Ուսուցման խանգարումները:
37. Հույզերի նյարդակազմաբանությունը:Հույզերի կենտրոնական մեխանիզմների կենսաքիմիական
առանձնահատկությոնները:
38. ՎՆՀ-ի կառուցվածքը և նրա դերը հույզական ոլորտի կարգավորման մեջ: Հույզերի

վեգետատիվ ցուցանիշները:
39. Սթրեսի հոգեֆիզիոլոգիական մեխանիմները, նյարդակազմաբանությունը:
40. Քնի փուլերը, նեյրոֆիզիոլոգիական մեխանիզմները:

▪ **Ընդգրկվող թեմաները.**

1. Հոգեֆիզիոլոգիայում կիրառվող փորձարարական մեթոդները:
2. Գլխուղեղային միջնորդանյութեր, նրանց դերը վարքային ռեակցիաներում:
3. Գործառական բլոկներ:
4. Զգայական համակարգերի հոգեֆիզիոլոգիա:
5. Շարժողական համակարգերի հոգեֆիզիոլոգիա:
6. Ֆունկցիոնալ համակարգեր:
7. Գիտակցության հոգեֆիզիոլոգիա:
8. Մտածողության հոգեֆիզիոլոգիա:
9. Ուշադրության հոգեֆիզիոլոգիա:
10. Ուսուցման հոգեֆիզիոլոգիա:
11. Հիշողության հոգեֆիզիոլոգիա:
12. Հույզերի հոգեֆիզիոլոգիա:
13. Սթրեսի հոգեֆիզիոլոգիա:
14. Քնի հոգեֆիզիոլոգիա:

- **Ընդգրկված հարցեր.**

1. Առաջին գործառական բլոկ:
2. Շարժման նյարդակազմաբանությունը:Շարժողական ակտը նախաձեռնելու հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները:
3. Մեծ կիսագնդերի կեղևի բջջակերտվածքային քարտեզ:
4. Ուղեղային կենտրոնները և գիտակցությունները:
5. Ուշադրության ընդհանուր հոգեֆիզիոլոգիական բնութագիրը :
6. Հույզերի խանգարումները:
7. Քնի փուլերը

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ և ՄԵԹՈԴԻԿԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մասնագիտություն՝ 031301.00.6 Հոգեբանություն _________________ _
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 031301.00.6 Հոգեբունություն _________________
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Հոգեբանության բակալավր

Վանաձոր 2023

**Հեռակա ուսուցման համակարգ**

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">ՔԿ/բ-147 – Հոգեֆիզիոլոգիա</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">4 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">1-ին կուրս, 2-րդ կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="6">Ժամերի բաշխումը</td><td rowspan="4">Լսարանային</td><td rowspan="4">16</td><td>Դասախոսություն</td><td>8</td></tr>
<tr><td>Սեմինար</td><td></td></tr>
<tr><td>Լաբորատոր աշխատանք</td><td>4</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td>4</td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">104</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">120</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">Քննություն</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">
▪ Ուսանողների մոտ ձևավորել հիմնարար պատկերացումներ հոգեկան գոչծընթացների վերաբերյալ<br>
▪ Դիտարկել գլխուղեղը, որպես հոգեկանի բարձրագույն օրգան:<br>
▪ Ձևավորել պատկերացումներ հոգեֆիզիոլոգիական տարբեր դպրոցների կողմից ընդունված տեսությունների և<br>
▪ հայեցակարգերի մաhին:<br>
▪ Ձևավորել պատեկարացումներ գլխուղեղի տեղային ախտահարումների հետևանքով առաջացած հոգեկան խախտումների<br>
▪ հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների մասին:
</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.<br>
Գիտելիք<br>
➢ իմանա Հոգեֆիզիոլոգիական հիմնական հասկացությունների գիտական հիմքերը,<br>
➢ հոգեֆիզիոլոգիական օինաչափությունների ուսումնասիրման ընդհանուր սկզբունքները,<br>
➢ հոգեկան գործընթացների ֆիզիոլոգիական առանձնահատկությունները և գլխուղեղի կառուցվաքն ու գործառույթը՝ որպես նյութական սուբստրատ<br>
Հմտություն<br>
➢ պատկերացնել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերը,<br>
➢ կատարել հիմնավորված եզրահանգումներ հոգեկան երևույթների,օրինաչափությունների և նրանց գործառույթների համար պատասխանատու գլխուղեղային կառույցների վերաբերյալ,<br>
➢ պատկերացնի հոգեֆիզիոլոգիայում օգտագործվող հետազոտման մեթոդների վերաբերյալ,<br>
Կարողունակություն<br>
➢ հիմնական հոգեֆիզիոլոգիական գործընթացների ձևավորման և զարգացման նեյրոֆիզիոլոգիական հիմքերին:
</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | ➢ հոգեֆիզիոլոգիայում ընդունված հիմնական հայեցակարգերին<br>➢ Ունակ լինի հստակ ներկայացնելու հոգեֆիզիոլոգիական օրինաչափություններ հիմնական դրույթները,<br>➢ հոգեֆիզիոլոգիայի գիտական հիմնավորումները, հիմնախնդիրները և լուծման հնարավոր ճանապարհները |
| **Դասընթացի բովանդակությունը** | Թեմա 1՝ Հոգեֆիզիոլագիա առարկան, պատմական համառոտ ակնարկ, ուսումնասիրման մեթոդները:<br>Թեմա 2՝ Հասկացություն ֆունկցիոնալ վիճակի մասին: Ֆունկցիոնալ վիճակը որպես ցանկացած գործունեության և վարքի պարտադիր բաղկացուցիչ:<br>Թեմա 3՝ Գլխուղեղի գործառնական բլոկներ:<br>Թեմա 4՝ Զգայական գործընթացների հոգեֆիզիոլոգիա:<br>Թեմա 5՝ Շարժման հոգեֆիզիոլոգիա, շարժողական ակտի նյարդակազմաբանությունը:<br>Թեմա 6՝ Գիտակցության հոգեֆիզիոլոգիա:<br>Թեմա 7՝ Մտածողության հոգեֆիզիոլոգիա: Խոսք նմտածողություն:<br>Թեմա8՝ Հիշողության, ուշադրության և ուսուցմանհոգեֆիզիոլոգիա:<br>Թեմա 9՝ Հույզերի հոգեֆիզիոլոգիա, հույզերի նյարդակազմաբանությունը:<br>Թեմա 10՝ Սթրեսի հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները և նյարդակազմաբանությունը:<br>Թեմա 11՝ Քնի հոգեֆիզիոլոգիա<br>Թեմա12՝ Հոգեսոմատիկ փոխներգործություն |
| **Գնահատման մեթոդները և չափանիշները** | Գիտելիքները գնահատվում են գրավոր աշխատանքով: Քննական տոմսը ներառում է տեսական հարցեր, թեստեր: Յուրաքանչյուր առաջադրանքի համար քննական տոմսում նշագվում է գնահատման համարժեք միավորը: Գրավոր աշխատանքը գնահատվում է առավերագույնը 20 միավոր:<br>Ինքնուրույն աշխատանքը գնահատվում է առավերագույնը 20 միավոր: Գնահատման չափանիշներն են.<br>1. Հարցը ներկայացված է ավարտուն<br>2. Կարողանում է տերմինները բացատրել<br>3. Խոսքը հստակ է, մատչելի<br>4. Պատրաստված է ցուցադրություն<br>5. Կիրառվել են տարբեր գրական աղբյուրներ և առկա են հղումները /0; 1-2; 3 և ավելի/<br>6. Պատասխանել է հարցերի /0; 1-2; 3 և ավելի/<br>7. Զեկուցումը գիտական է<br>8. Կատարվել է համեմատական վերլուծություն<br>9. Ներկայացնում է կիրառական օրինակներ<br>10. Քննարկվող գործընթացները ներկայացվել են բույսի օրգանիզմի ամբողջականության համատեքստում<br>Յուրաքանչյուր չափանիշի համար սահմանված առավելագույն միավորը՝ 2 , չափանիշի պահանջը թերի կատարելու դեպքում՝ 1 միավոր, չկատարելու դեպքում՝ 0 միավոր: Գումարային գնահատականը կլինի ինքնուրույն աշխատանքի գնահատականը: |
| **Գրականություն** | Պարտադիր-<br>1.Գրիգորյան Վ.Հ. Հոգեֆիզիոլոգիա Դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2-րդ վերամշակված հրատարակություն, 464 էջ2014<br>2. Կատունովա Վ.Վ., Պոլովինկինա Է.Օ.,Նեյրոֆիզիոլոգիա. բուհական |

| | |
|---|---|
| | դասագիրք. - Նիժնի Նովգորոդ: NIMB,2013. 3..Александров М. В., Лытаев С.А., Березанцев М.С., Психофизиология, учебное пособие,3-е перепаботанное и дополненное издание,СПБ, спец.лит. 2018.<br>4. Психофизиология, учебник для вуз-ов, под ред. Александрова Ю.И.,издательский дом Питер.2021.<br><br>Լրացուցիչ-<br>1.Աղաբայան Հ.Ռ., Առաքելյան Ա. Ն., Հոգեֆիզիոլոգիայի հիմունքներ, ուսումնական ձեռնարկ, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն 2016.<br>2. Блум Ф., Лейзерсон А., Хофстедтер Л. Мозг, разум и поведение. М. Наук 1988.<br>3. Данилова Н.Н. Психофизиология, Учебник для ВУЗ-ов , Аспект Пресс, Москва.2012.<br>4. Шостак В.И.Психофизиология Издательство:ЭЛБИ-СПБ Россия.2009.<br>5. Лурия А.Р. Основы нейропсихологии, Нейропсихология сегодня/ под ред Е.Д. Хомской , Москва МГУ.1995. |